ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
11 ապրիլի 2024 թվականի N 129-Ա

«ԿԱՊԱՆԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱԼՅՈՇԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՇԽԱՏՈՂ ՆՈՒՆԵ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով «Կապանի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Հայրապետյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ՝

2024 թվականի ապրիլի 16-ից 18-ը՝ «Կապանի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ալյոշա Հայրապետյանի գործուղման մեջ գտնվելու ժամանակահատվածում, տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության գիտաշխատող Նունե Հակոբյանին:

2024-04-11 17:28:04 GMT+4
Հավանություն է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2024թ. ապրիլի 11
ք. Կապան